

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. Մարգար. Հալածանքի ծնունդը. քերթուած (Քարիի կրգերից) Ալէքսան-
դրապօլ. 1905. էջ 64.

Պ. Մարգարը գրելու ձիրքի նշաններ է ցոյց տալիս. այս անգամ նա՝ շատ յաջող նիւթ է ընտրել, բայց տարաբախտաբար չէ կարողացել լաւ մշակել իւր գաղափարը: Եթէ հեղինակը իւր ընտրած նիւթը կարգին ուսումնասիրէր և սիմվօլական ցնորքներից հետու մնար՝ շատ սիրուն և գաղափարական պատկեր կարող էր լինել «Հալածանքի ծնունդը»: Առհասարակ նոր սկսող գրիչները չեն կարող յաջողութիւն ունենալ այդ ուղղութեամբ. սիմվօլիզմը միմիայն շնորհալի ու տաղանդաւոր վիպադիրների գրուածքների մէջ մի բանի նման է լինում, թէ չէ մեծ մասամբ անշնորհք և անհասկանալի բառերի կուտակումն է ներկայացնում: Եթէ ժողովրդին ընթերցանութեան նիւթ էք տալիս և ուզում էք, որ նա օգտուի կարգացածից և զարգանայ, այնպէս գրեցէք, որ նա բան հասկանայ. հակառակ դէպքում մի երկու էջ կարդալուց յետոյ գիրքը դէն կշտուուի. ընթերցողն ամեն անգամ ձրտեղ որոնի պ. Մարգարին ու հարցնի՝ թէ ինչ է նշանակում «ուղիների տիտան հասակ», «մեծ ուղիների տիտան հասակը անհ չափելով... ես քուն եմ մտնում» էջ 1). «բռնաքարուած ուղեղ» («բռնաքարուած խղճուկ ուղեղս մեղմիկ շոյում է» էջ 1.), «սրտի արգանդ» («Որ ծնունդ առար սրտիս արգանդում» էջ 6.), «աղիքների ականջներ» («Թող նոցա փորում գար, աղիքների սուր ականջներին իւր գաղտնիքները յաւիտեան պատմէ» էջ 41), «թլպատած խիղճ», «հոգով ներքինի» (Եւ հզօր շահի՝ խիղճը թլպատած, հոգով ներքինի բիւր ծառաները» էջ 45) և այլ այսպիսի անմտութիւններ: Խնայեցէք ընթերցողներին: Պ. Մարգարի մուսաներն էլ տարօրինակ բաներ են «Բե՛զ՝ սիրոյ ծնող, սիրոյդ՝ վշտի մայր, վշտին՝ ինձ դայեակ—անա ձօնում եմ ձեր ար-

գասիքը... Դո՛ւք էք իմ մուսանս—էջ 7. հանելուկ. հվ կամ
 քնչն է Մարգարի մուսանս:

2. Ժ. ՄԱՍՍՈՆ. Նապաստակ Խեչանի վրեժխնդրութիւնը կամ ինքն ընդ
 օգնիք. զրոյց պատկերազարդ, Ֆրանս. փոխադրեց Լևոն Մելիք-Արամեանց. Թիֆ-
 լիզ 1905. էջ 57.

Ճիշտն ասեմ՝ վաղուց է այսպիսի հայաշունչ լեզուով
 գրուած մանկական գիրք չէր ընկել ձեռքս. թէև գրքի վրայ
 փոխադրութիւն է տպուած, բայց իսկապէս ինքնուրոյն աշ-
 խատութեան տպաւորութիւն է թողնում: Գրքի իւրաքանչիւր
 էջից բուն հայ լեզուի բուրմունքն է ստացւում. գեղեցիկ ոճեր,
 ժողովրդական բառեր, կոկ, պարզ դե իւրըմբռնելի նախադա-
 սութիւններ. այսպիսի յատկութիւնները գնահատելի են գրքերի
 և մանաւանդ մանկական ընթերցանութեան գրքերի համար:
 Այս մանկական զրոյցի բարոյականն է ինքնօգնութեան գա-
 դափարը, որ շատ յարմար ընթերցանութեան նիւթ է մանա-
 ւանդ մեր ժամանակներում. միշտ ուրիշների յուսով ապրողը
 վերջը բոլոր ունեցածն էլ կկորցնի: Գրքի արտաքինն էլ հա-
 մապատասխանում է ներքին արժանաւորութեանը. տպուած
 է մաքուր, խոշոր տառերով և ընտիր թղթի վրայ. յաջող են
 նաև պատկերները:

3. ՅԱՐ. ՆՄԱՅԵԱՆ. Մինոյն՝ գաղղում... պատկեր. Թիֆլիս 1905 թ. էջ 16.

Վերջին տամնամեակի ընթացքում հայ ժողովրդի կրած
 սոսկալի տառապանքները, հայի ընակավայրը արեան հեղեղներով
 ծածկող գազանային արարքները, մի այնպիսի դրութիւն ստեղծե-
 ցին, որի առաջ նսեմացան մեր պատմագիրները և ձեռագիրների
 յիշատակարաններում նկարագրուած արիւնալի ու հոգեմաշ
 գեժրադատութիւնները, հայութեան սև ճակատագրի միշտ և շա-
 բունակ կրկնուող պատահարները՝ ժողովրդական սարսափի
 ձր տեսակը մնաց, որ չկրեց բազմաչարչար հայութիւնը. կո-
 տորած, աւերում սով, հրդեհ, երկրաշարժ, երաշտ, մորեխ,
 խօլերա, բռնութիւն, բանտ, աքսոր... էլ որ մէկն ասեմ: Եթէ
 այս դառնութեան ու լեռնացած վշտի շրջաններում մենք տա-
 դանդաւոր գրողներ ունենայինք, կարող էին իրենց անունն
 անմահացնել՝ իրական կեանքի արիւնաներկ դրամաները շա-
 բահիւսելով. բարթուղիմեան պատմական գիրքները մեր ներ-
 կայի լուկ ուրուագծերը կարող են լինել... Տարաբախտաբար